# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**08.03.2021թ.**

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՄԵՍՐՈՊ ՄԵՍՐՈՊՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

Սիրելի կանայք, մայրեր, քույրեր, մեր ամենագեղեցիկներ,

շնորհավորում եմ գարնան ամենապայծառ տոնի՝ Կանանց միջազգային օրվա առիթով:

Աներևակայելի ներուժ ունեցող մարդիկ են կանայք, անհասկանալի ձևով հասցնում են ամեն ինչ ճիշտ ժամանակին. հոգ են տանում ընտանիքի մասին, հաջողություններ են գրանցում աշխատանքում, ուսման մեջ և այս ամենին զուգահեռ շարունակում են մնալ խնամված և գեղեցիկ:

Դժվար է պատկերացնել մեր երկրի զարգացումն առանց հայ կնոջ դերակատարության: Շատ բնագավառներում ձեր փորձն ու ներուժն անգնահատելի է:

Սիրելի՛ կանայք,

մաղթում եմ ձեզ անսահման երջանկություն, ընտանեկան ջերմություն, հաջողություններ, լիքը սեր, թող ձեր աչքերը միայն ուրախությամբ լցված լինեն:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** **Մ.ՄԵՍՐՈՊՅԱՆ**